

# Լիափորնա

Բոլորիս ուշադրությունն ուղղենք դեպի Հիսուս Քրիստոսը



ԵԿԵՔ  
ՔՐԻՍՏՈՍԻ  
ՄՈՏ

**ԱՎԵՏԱՐԱՆԻ ՆԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

Ինչու է մեզ Փրկիչ հարկավոր, էջ 6

**ԳՏՆԵԼ ԴԵՊԻ ՔՐԻՍՏՈՍ  
ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՆԸ**

Մի վախեցեք փորձության ժամանակ, էջ 8





## Հոնկոնգ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն

Մարդկանց մեծ մասը Հոնկոնգը համարում է աշխույժ և ավազանազատային մարդաշատ քաղաք: Սակայն արվարձաններն այդքան էլ մարդաշատ չեն: Մինչ հարևանը Նայում Է, Եկեղեցու անդամների երեք սերունդ ունեցող ընտանիքը միասին իրենց հանգիստն են վայելում շենքի հարակից պուրակում:



Վերջին 10 տարվա ընթացքում անդամակցությունը կրկնապատկվել է



6 ցից, 1 միսիա, 1 տաճար



1949թ. հաստատվել են միսիայի գլխավոր գրասենյակներ

### Ցուցադրել անկեղծ հոգատարություն ուրիշների հանդեպ

Հոնկոնգում գնացքի վրա պատկերված են մայր և դուստր Քերի Շուկ-Ֆան Լյունգը և Շայլա Սուեթ-ի Լյունգը: Երբ հարցնում են սպասավորության մասին, Քույր Քերի Լյունգն ասում է. «Երբ մենք անկեղծ հոգատարություն ենք ցուցաբերում մեր շրջապատի հանդեպ, մենք սպասավորում ենք»:





*«Եջնարիստ աստու՛մ եւ՛ քեզ, որ բոլոր նրանք, ույքեր ընդունում են իմ  
սպիտաբարանը, որդիներ և դուստրեր են իմ արքայությունում»:*

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԽՏԵՐ 25.1



ՆԱԲՈՒՅԵՑ ԲԱՅԱՆՄԹԻՎ ՏԱՐԵՐ ԶԻՎԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ, Ձ. ԲՇԵ ՌԻԶՄԻՆ, ՊԱՏՆԱԿՈՒՄՆԱԿՆԵՐԻ

## Աշխարհն ունի հավատարիմ կանանց կարիքը



Մայր Եվայի առաջին օրերից ի վեր կանայք կարևոր դեր են խաղացել օգնելով կյանքի կոչել Իր գավակների համար նախատեսած Աստծո ծրագիրը: Այս ամիս մենք հնարավորություն ունենք ավելի իմանալու որոշ կանանց մասին, ովքեր ռաիվիրաներ էին ավետարանի Վերականգնման առաջին օրերին: Օրինակ, 16-րդ Էջում մենք կարող ենք կարդալ Ջեյն Մենինգ Ջեյմսի և Նրա խիստ համառություն դրսևորելու օրինակի մասին: Մինչ ուսումնասիրում ենք Վարդապետություն և Ուխտեր 25 գլուխը, մենք լսում ենք սրբազան օրհներգերի հավաքածու ստեղծելու վերաբերյալ Էմմա Սմիթին ուղղված Տիրոջ խոսքերը:

Վերականգնումը շարունակվում է մեր օրերում, և աշխարհն ավելի քան երբևէ ունի հավատարիմ կանանց նշանակալի ներդրումների կարիքը: 12-րդ Էջում կարող եք կարդալ, թե ինչպես են մեզանից նրանք, ովքեր ծառայում են որպես Եկեղեցու բարձրագույն պաշտոնյաներ, տեսել քահանայության ուժի գործածությունը մեր կյանքում: Քահանայության այս գործությունը, որը հասանելի է թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց, թույլ է տալիս, որ Աստծո գործը շարունակվի երկրի վրա:

Անկախ մեր սեռից, տարիքից, ազգությունից կամ այլ հանգամանքներից, մենք բոլորս Աստծո սիրելի գավակներն ենք՝ աստվածային ժառանգությամբ և ներուժով:

Հարգանքներով,

Նախագահ Ջոյ Դ. Ջոնս

Երեխաների միության գերագույն նախագահ



«Յուրաքանչյուր կին ունակությունների և տաղանդների եզակի խառնուրդ է և բոլորը Աստծո պարգևներն են»:  
-Նախագահ Ջին Բ. Բինգհեմ, էջ 13

ԿԱՐԵԿՈՐԱԳՈՒՅՆ ՄԻՏԵՐ

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական ամսագիր  
հունվար 2021,  
հատոր 22, համար 2  
Կահոնա 17466

ԿԱԶՄ



Հավատի կատարողը, Ջ. Ալան Բարթթ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**6 Ավետարանի հիմունքները:**  
**Հիսուս Քրիստոսը փրկեց մեզ մեղքից ու մահից**

**8 Զգտենք Քրիստոսի կատարելությանը**  
*Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ*  
Այս Ջաստիկի օրերին ուղի հարթեք դեպի Հիսուս Քրիստոսը և զգացեք Նրա խաղաղությունը:

**12 Զգալ քահանայության գորությունը**  
Կանայք, ովքեր օգնում են առաջնորդել Եկեղեցին, կիսվում են, թե ինչպես են օրհնված քահանայությամբ:

**16 Վերականգնման վաղ շրջանի կանայք:**  
**Ջեյնն ուրախ անցավ ճամփորդությունը**  
Կարևոր տեղեկություններ Ջեյն Մեյնից Ջեյմսի կյանքից:

**17 Վերջին Օրերի Սրբերի ձայները**  
Հավատքի պատմություններ անդամներից ողջ աշխարհով մեկ:

**20 Հաղթահարել աշխարհիկ հոգսերը**  
*Երեց Հանս Թ. Բոմ*  
Օրհնություններ են սպասվում նրանց, ովքեր իրենց կյանքում առաջնահերթությունը տալիս են Երկնային Հորը:

**24 Երաժշտությունը պահենք երկրպագության հիմքում**  
*Ջեն Փիկերո*  
Ավելի քան երբևէ մենք ունենք սրբազան երաժշտության հոգևոր աջակցության կարիքը:

**28 Օգնություն ծնողների:**  
**Ի՞նչ ուսուցանեց ինձ ավելը՝ ծնող լինելու մասին**  
*Կամրի Միլեյն Վեբստեր*  
Աստծո կատարելությունն օգնում է ծածկել որպես ծնողներ մեր ունեցած անկատարությունները:

**30 Չափափա երիտասարդներ:**  
**Դառնանք լավագույն տնտեսները Երկրի, որն Աստված ստեղծեց մեզ համար**  
*Երեց Մարկոս Բ. Նաջ*  
Որքան լավ հոգ տանենք աշխարհի մասին, այնքան ավելի լավ այն կոգեշնչի և կուրախացի մեզ:

**Ստացին նախագահություն** Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Շ. Օուգս և Շենրի Բ. Այրինգ  
**Տասներկու Ստաբլաների Քվորում.** Մ. Ռասսել Բայլարդ, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դիտեր Ֆ. Ուլտորֆ, Դեյվիդ Ա. Բեդլար, Քուենթին Լ. Քուք, Դ. Թոմ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Ստեյնսեն, Ռոնալդ Ա. Ռասբենդ, Գարի Է. Սթիվենսոն, Դեյվ Գ. Ռեյլանդ, Վերիտա Վ. Գոնգ և Ուլիսես Ստարեմ  
**Խմբագիր.** Ռենդի Դ. Ֆանկ

**Խորհրդատուներ.** Մարկոս Ա. Այրուկատիս, Միշել Դ. Քրեյգ, Բեքի Քրեյվեն, Շարոն Յուբանկ, Քրիստինա Բ. Ֆրանկո, Վոլթեր Ֆ. Գոնգալես, Ջերեմի Ռ. Ջագգի, Ջեն Ի. Նյումեն, Էդրիան Օչոա, Մայքլ Թ. Ռիկվալտո, Բրեդլի Ռ. Ուիլքոքս  
**Գլխավոր տնօրեն.** Ռիչարդ Ի. Հիթոն  
**Եկեղեցու ամսագրերի տնօրեն.** Ալան Ռ. Լոյբորգ  
**Բիզնես ղեկավար.** Գարֆ Քենոն  
**Գործադիր խմբագիր.** Սդամ Ա. Օլսոն  
**Գործադիր խմբագրի օգնական.** Ռայլն Քար

**Հրատարակման օգնական.** Էնիշ Ս. Դավիլա  
**Չեռագրեր և խմբագրում.** Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Եդվարդս, Մեթյու Դ. Ֆիլոն, Գարեթ Շ. Գարֆ, Ջոն Ռայան Ջենսեն, Սիարոն Ջոնսթոն, Շարլոտ Լարկաբայ, Մայքլ Ռ. Սորիս, Էրիկ Բ. Մորրոկ, Ջոշուա Ջ. Փերքի, Ջեն Փիկերո, Ռիչարդ Մ. Ռոմիս, Միկոյի Սելու, Լորի Ֆուլլեր Սոսա, Չեյքլ Ուոլդեյ, Մարիսա Վիդիսոն  
**Նկարչական ձևավորման տնօրեն.** Թադ Ռ. Փիթերսոն  
**Ձևավորում.** Ջանեթ Էնդրյուս, Ֆեյ Գ. Մարդոս, Մենդի Բենթլի, Ա. Քիմբալ Բոթ, Թոմաս Չայլդ, Ջոշուա Դենիս, Դեյվիդ Գրին, Քոլլին Հիլքլի, Էրիկ Գ. Ջոնսոն, Սյուզան Լոֆգրեն, Սքոթ Մ. Մույ, Ալենի Ռեգեր, Մարք Վ. Ռոբիսոն, Կ. Նիկոլ Վոլկենհորստ

**Մտավոր սեփականության համակարգող.** Քոլեթ Նեբեներ Օս  
**Հրատարակման տնօրեն.** Ամոն Հարիս  
**Հրատարակում.** Իրա Գլեն Արներ, Ջուլի Բրոդեթ, Բրայան Վ. Ջիջի, Ջիննի Ջ. Նիլսոն, Մարիսա Մ. Սմիթ  
**Նախատպագրություն.** Ջոշուա Դենիս, Ամոն Հարիս  
**Տպագրության տնօրեն.** Սթիվեն Թ. Լյուիս  
**Բաշխման տնօրեն.** Նելսոն Գոնսալես  
**Փոստային հասցե.** Liahona, Fl. 23, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0023, USA.

# Ուսուցանել, թե ինչպես հաղթահարել դժվարությունները Հիսուս Քրիստոսի միջոցով

Սիրելի՛ ծնողներ,

Մտածելով անձամբ ձեր և ձեր ընտանիքի մասին՝ մենք պատրաստել ենք այս ամսվա համարը և ներառել այնպիսի թեմաներ, ինչպիսիք են Հիսուս Քրիստոսը և Նրա Թավությունը, ինչպես հաղթահարել աշխարհի հոգսերը և բարելավել մեր երկրպագությունը երաժշտության միջոցով: Հետևյալ գաղափարները կարող են օգնել ձեզ օգտագործել այս ամսվա համարը՝ գորացնելու ձեր ընտանիքի հավատքն առ Հիսուս Քրիստոսը:

## ԿԵՆՏՐՈՆԱՑԵՔ ԶՐԻՍՏՈՍԻ ՎՐԱ

Օգտագործեք 6-րդ և 8-րդ էջերի հոդվածները՝ ձեր երեխաներին Հիսուս Քրիստոսի մասին սովորեցնելու համար: Միասին դուք կարող եք թվարկել մի քանի եղանակ, թե ինչպես են Փրկիչը, Նրա ավետարանը և Նրա Եկեղեցին օրինում ձեզ և ձեր ընտանիքին այսօր:

## ՀԱՂԹԱՆԱՐԵԼ ԱՇԽԱՐՀԻԿ ՀՈԳՍԵՐԸ

Կարդացեք Երեք Հանս Թ. Բոմի հոդվածը 20-րդ էջում: Ընտանիքով քննարկեք հետևյալ հարցերը. աշխարհիկ ի՞նչ հոգսեր ունեք ձեր կյանքում: Ինչպե՞ս կարող եք ավելի կենտրոնանալ Տիրոջ կամքի վրա: Դուք ունեցե՞ք եք փորձառություն, որը նման է եղել Երեք Բոմի փորձառությանը: Ի՞նչ եք սովորել:

## ՍՐԲԱԶԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ձեր կարծիքով, երաժշտությունն ինչո՞ւ է կարևոր Տիրոջ համար: Կարդացեք 24-րդ էջի հոդվածը և խորհեք ուղիների մասին, թե ինչպես կարող եք երաժշտությունը պահել ձեր ընտանեկան երկրպագության կենտրոնում:

## ԿԱՆԱՅՔ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Վերանայեք Եկեղեցու ղեկավարների հոդվածը 12-րդ էջում: Ապա 16-րդ էջում կարդացեք Ջեյն Մենինգ Ջեյմսի կյանքից մի պատմություն, ով Վերականգնման վաղ շրջանի մի հավատարիմ կին է: Ընտանիքով ժամանակ տրամադրեք՝ շնորհակալություն հայտնելու այն արդարակյաց կանանց, ովքեր դերակատարում ունեն ձեր կյանքում:

## ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### Համաժողովի հուշատետր

Սա հրաշքալի եղանակ է՝ նախապատրաստվելու և նշումներ կատարելու գերագույն համաժողովի ընթացքում:

## ԱՅՍ ԱՍՍՎԱ ԸՆԿԵՐՈՒՄ

### Հույս Քրիստոսում

Կարդացեք Նախագահ Չենրի Բ. Այրինգի ուղերձը Զատիկի տոնի կապակցությամբ և Զատիկի պատմության վերաբերյալ մի միջոցառում կազմակերպեք:

## ԱՎԵԼԻ ՀԱՃԱՍԻ ԵՐԵՔ ԿԱՊԻՍԵՔ

Գտեք ամսագրի համարները լսողական, թվային և տպագիր ձևաչափերով [liahona.ChurchofJesusChrist.org](http://liahona.ChurchofJesusChrist.org)-ում Դուք նաև կարող եք համապատասխան դաշտում կիսվել հարցերով, արձագանքներով և փորձառություններով:

Բացի դրանից՝ դուք կարող եք մեզ հետ կապ հաստատել հետևյալ էլեկտրոնային փոստի միջոցով [liahona@ChurchofJesusChrist.org](mailto:liahona@ChurchofJesusChrist.org) կամ փոստով՝ հետևյալ հասցեով. Liahona, floor 23, 50 E North Temple St, Salt Lake City, UT 84150-0023, USA

*Լիահոնան* (Մորմոնի Գրքի եզրույթ է, որը նշանակում է «կորմացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, այբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, ղակիերեն, էստոներեն, թայվաոց, թաիթերեն, թամիլ, թայերեն, թելուգու, թունգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատիշերեն, լեհերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբատի, կորեերեն, հայիթերեն, հայերեն, հինդի, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագալի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամոյան, սինհալա, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուասո, ֆիններեն, ֆիջերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հասանալիությունը տարբեր է՝ ըստ լեզուների):

© 2021 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում: **Տեղեկատվություն հեղինակային իրավունքի մասին.** Եթե չկա որևէ նշում, անհատները կարող են պատճենահանել կրթության համարների համար, ոչ-առևտրային օգտագործման նպատակներով (ներառյալ եկեղեցու կոյուսների համար): Այս իրավունքը կարող է ուժը կորցրած ճանաչվել ցանկացած ժամանակ: Նկարները չի կարելի պատճենահանել, եթե սահմանափակումներ են նշված նկարի ներդիրում: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., FL 13, Salt Lake City, UT 84150, USA, կամ էլ-փոստով. [cor-intellectualproperty@ChurchofJesusChrist.org](mailto:cor-intellectualproperty@ChurchofJesusChrist.org): **For Readers in the United States and Canada:** March/April 2021 Vol. 22 No. 2. LIAHONA (USPS 311-480) English (ISSN 1080-9554) is published monthly by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City,

UT 84150-0024, USA. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address must be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (American Express, Discover, MasterCard, Visa) may be taken by phone or at [store.ChurchofJesusChrist.org](http://store.ChurchofJesusChrist.org). (Canada Post Information: Publication Agreement #40017431) **POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 507.1.5.2).** NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA..

# Հիսուս Քրիստոսը փրկեց մեզ մեղքից ու մահից

*Նրա զոհաբերության շնորհիվ մենք բոլորս հնարավորություն ունենք գտնելու հավերժական խաղաղություն և ուրախություն:*



**Մ**ենք ընդունում ենք Հիսուս Քրիստոսին՝ որպես մեր Փրկիչ: Եվ դրա պատճառն այն է, որ Նա վճարեց մեր մեղքերի գինը և հաղթեց մահին: Նա փրկեց մեզ: Մեր համար կատարած Նրա զոհաբերությունը, որը կոչվում է Քավություն, երբևէ տեղի ունեցած ամենակարևոր իրադարձությունն է: Նրա շնորհիվ մահը վերջը չէ: Նրա շնորհիվ մեր մեղքերը կարող են ներվել, մենք կարող ենք կրկին մաքուր լինել և օրեցօր ավելի լավ դառնալ:

## Հիսուս Քրիստոսն անդրանիկն էր

Նախքան երկիր գալը մենք ապրել ենք մեր երկնային ծնողների հետ: Որպես անդրանիկ՝ Հիսուս Քրիստոսն օգնել է ստեղծել այս գեղեցիկ աշխարհը: Նա ընտրված էր լինելու մեր Փրկիչը, և համաձայնեց գալու աշխարհ, որպեսզի կարողանար կատարյալ օրինակ ծառայել, ուսուցանել Իր ավետարանը և Քավություն կատարել մեզ համար:

## Հիսուս Քրիստոսը վճարեց մեր մեղքերի համար

Երբ Հիսուսը իմացավ, որ շուտով մահանալու էր, Նա գնաց Գեթսեմանի կոչվող պարտեզը՝ աղոթելու: Այդ աղոթքի ժամանակ Նա սկսեց վճարել մեր մեղքերի գինը: Նա հոժարակամ տառապեց, որպեսզի ապաշխարելու դեպքում մենք ստիպված չլինենք տառապել: Թողնելով մեր մեղքերը և հետևելով Փրկիչին, մենք կարող ենք գտնել ներում և բժշկում: Մենք լիարժեք չենք կարող հասկանալ, թե ինչպես, բայց Հիսուսը հստակ հասկանում է մեզանից յուրաքանչյուրին: Նա անցել է մեր բոլոր վշտերի, հիվանդությունների և ցավերի միջով: Սա Քավության առաջին մասն է:

## Հիսուս Քրիստոսը հաղթեց մահին

Գեթսեմանիի աղոթքից հետո Հիսուսը մատնվեց, ձերբակալվեց և մահվան դատապարտվեց՝ խաչելության միջոցով: Չնայած Նա ամենագոր էր, սակայն Հիսուսը հոժարակամ մահացավ խաչի վրա: Հիսուսի հետևորդները Նրա մարմինը սիրով դրեցին գերեզմանում: Նրանք չէին հասկանում, որ չնայած Նրա մարմինը մահացած էր, Նրա հոգին շարունակում էր կենդանի մնալ հոգիների աշխարհում: Երեք օր անց Հիսուսը կրկին կենդանացավ և այցելեց նրանց, ապացուցելով, որ կարող էր հաղթել մահին: Քանի որ Հիսուսը հարություն առավ, մեզանից յուրաքանչյուրը կրկին կապրի մեր մահից հետո: Սա իրականացրեց Քավությունը:









Երեց Ջեֆրի Ռ. Շոլլանդ  
Տասներկու Առաքյալների Քվորումից

# Չգտենք Քրիստոսի կատարելությունը

Թույլ տվեք մի քանի միտք առաջարկել այն անձնական որոնման հետ կապված, որը ձեզանից յուրաքանչյուրը կկատարի՝ փնտրելով Քրիստոսի «կատարեալ» հասակին հասնելու ուղին (տես Եփեսացիս 4.13): Հուսով եմ՝ դրանք ձեզ համար արժեքավոր կլինեն կյանքի այս բեկումնային փուլում և այն հանգամանքներում, որոնցում դուք հայտնվում եք:

Ձեզանից ոմանք այն հարթության վրա են, որտեղ ցանկանում եք լինել, կամ գոնե դուք գիտեք, թե ուր եք ուզում գնալ ձեր կյանքում: Ոմանք, կարծես թե, շատ օրհնություններ ունեն և սպասվելիք հիանալի ընտրություններ: Ոմանք էլ զգում են, որ որոշ ժամանակ և ինչ-ինչ պատճառներով, ավելի քիչ բախտավոր են և ավելի քիչ գրավիչ ուղիներ են բացվում նրանց առաջ:

Բայց ուր էլ որ գնաք և ինչպես էլ հաղթահարեք նպատակակետին հասնելու ձեր մարտահրավերները, ես խնդրում եմ ձեզ գալ Փրկիչի՝ Հիսուս Քրիստոսի մոտ. սա է առաջին և անհետաձգելի քայլը դեպի ձեր անձնական նպատակակետը, ձեր անհատական երջանկությունն ու ուժը, ձեր վերջնական ճակատագիրն ու հաջողությունը (տես 1 Նեփի 10.18, 2 Նեփի 26.33, Օմնի 1.26, Վարդապետություն և Ուխտեր 18.11):

*Այս Չասկի օրերին ուղի հարթեք դեպի Հիսուս Քրիստոսը և փնտրեք խաղաղություն ազդարարող Նրա հուսադրող ձայնը:*

Այդ ամենը կարող է ձերը լինել, եթե «Ո՞ր ես գնում դու» (Մովսես 4.15) հարցին տրվող պատասխանն է՝ «Որտեղ որ դու ես, Տեր»:

Կյանքը կարող է դժվար լինել: Մենք ցավ ու ափսոսանք ունենք և իրական խնդիրներ, որոնք պետք է լուծել: Մենք ունենք հիասթափություններ և վիշտ, ամեն տեսակի վերելքներ ու անկումներ: Բայց Տերն ու մարգարեները այնքան քաջալերման խոսքեր են ասել այդ խնդիրները դիմագրավելու վերաբերյալ, որ եթե բոլորը գրի առնենք, տիեզերքը կլցվի:

## «Խաղաղություն եմ թողում ձեզ»

Փրկիչի վերջին աղոթքն ամենահուզիչ խոսքերով ասվեց Իր աշակերտների համար նույնիսկ այն ժամանակ, երբ նա գնում էր դեպի Գեթսեմանիի և Գողգոթայի ցավն ու տառապանքը: Այդ գիշեր, աշխարհում երբևէ տեղի ունեցած կամ տեղի ունենալիք ամենամեծ տառապանքի գիշերը, Փրկիչն ասել է. «Խաղաղություն եմ թողում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ: . . . Ձեր սիրտը չ'խռովի ես չ'վախենայ» (Հովհաննես 14.27):

Կյանքի հանդեպ ի՞նչ ապշեցուցիչ տեսանկյուն է ամենատանջալից ժամերին: Նա ինչպե՞ս կարող էր դա ասել՝ իմանալով, թե ինչ է իրեն սպասվում: Նա կարող էր դա ասել, որովհետև Նրանն են երջանիկ ավարտով Եկեղեցին և ավետարանը: Մեզ համար հաղթանակն արդեն նվաճված է: Նա նայում է հեռուն. Նա տեսնում է պատկերն ամբողջությամբ:

Կարծում եմ, որ մեզանից ոմանք, այնուամենայնիվ, դեռ ունեն պուրիտանական ժառանգության այն գաղափարախոսությունն, ըստ որի սխալ է

Մ․ ՎԻՆՇԵՆ, ՄԱՅՈՒ ՄԱՍ



*Մի անհանգստացե՛ք, թե վերջանում են ձեզ օգնելու Քրիստոսի հրաշքները: Նրա «Չնորհքը բավական է»:*

մխիթարվելը կամ աջակցվելը, որ մենք անընդհատ պետք է թշվառ լինենք: Ես հավաստիացնում եմ, որ «քաջացե՛ք» (Հովհաննես 16.33) «Քրիստոսի կատարեալ հասակի չափովը» (Եփեսացիս 4.13) կարող է լինել այն պատվիրանը, որը նույնիսկ վերջին օրերի հավատարիմ սրբերի կողմից գրեթե համընդհանուր կերպով դրժվել է, իսկ ես վստահ եմ, որ ուրիշ ոչինչ չի կարող ավելի վշտացնել Տիրոջ ողորմած սիրտը:

Որքան կմտահոզվե՞ի, եթե կյանքի որևէ փուլում իմ երեխաներից մեկը լուրջ անհանգստություն ունենար, դժգոհ կամ անհնազանդ լիներ, այդուհանդերձ, իմ մտահոգությունն ավելի խորը կլիներ, եթե զգայի, որ այդ իրավիճակում երեխան չի վստահում ինձ, որ օգնեմ, կամ մտածում է, որ իր ցանկությունն անկարևոր է ինձ համար, կամ իմ հոգատարությունն անապահով է:

Նույն կերպ ես համոզված եմ, որ մեզանից ոչ ոք չի կարող հասկանալ, թե որքան է ցավում Հայր Աստծո կամ Նրա Որդու՝ աշխարհի Փրկիչի սիրող սիրտը, երբ Նրանք տեսնում են, որ մարդիկ չեն վստահում Իրենց հոգատարությանը

կամ ապահով չեն զգում Իրենց ձեռքերում, կամ վստահություն չունեն Իրենց պատվիրանների հանդեպ: Իմ ընկերներ, միայն այդ պատճառով մենք պարտավոր ենք քաջ լինել:

**Նրա «Չնորհքը բավական է»**

Քրիստոսին փնտրելու և Նրա կատարեալ հասակի չափի վերաբերյալ մեկ այլ խորհուրդ տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Հիսուսը հինգ հացով և երկու ձկներով 5000-ին կերակրելու հրաշքը կատարեց (տես Մատթեոս 14.13–21): (Ի դեպ, մի անհանգստացե՛ք, Քրիստոսի հրաշքները չեն սպառվել ձեզ օգնելու համար: Նրա «Չնորհքը բավական է» [Բ Կորնթացիս 12.9]: Դա այդ հրաշքի հոգևոր, հավերժական դասն է: Նա բազում օրհնություններ ունի մեզ բաժանելու համար, և նույնիսկ մի քանի լիզամբյուղներով էլ ավելցուկ: Եղեք հավատավոր և վայելեք Նրա առաջարկած «կեանքի հացը»: (Հովհաննես 6.35):)

Բազմությանը կերակրելուց հետո Հիսուսն արձակեց նրանց, իսկ Իր աշակերտներին նավով ուղարկեց Գալիլեայի ծովի մյուս ափը: Ապա Նա «վեր ելավ

սարը, առանձին աղօթք անելու» (Մատթեոս 14.23):

Երբ աշակերտները ճանապարհ ընկան իրենց նավով, երեկո էր, իսկ գիշերը փոթորիկ բարձրացավ: Երևի թե, ի սկզբանե ուժեղ քամի էր ծովում: Քամու պատճառով այդ մարդիկ, հավանաբար, նույնիսկ առագաստները չէին բարձրացրել, այլ միայն թիավարում էին, և դա մեծ ջանքեր էր պահանջում:

Մենք գիտենք դա, քանի որ մինչև «գիշերի չորրորդ պահին» (Մատթեոս 14.25)՝ մոտավորապես գիշերվա ժամը 3:00-6:00-ի սահմաններում, նրանք ընդամենը մի քանի մղոն էին անցել (տես Հովհաննես 6.19): Այդ ժամանակ նավն ընկել էր կատաղի փոթորկի մեջ:

Սակայն, ինչպես միշտ, Քրիստոսը հսկում էր նրանց: Տեսնելով նրանց դժվարությունը՝ Փրկիչը ամենաուղիղ ճանապարհով պարզապես մոտեցավ նրանց նավին՝ հաղթահարելով ալիքները նրանց օգնելու համար:

### «Մի վախենաք»

Ամենադժվար պահին աշակերտները նայեցին և մթության մեջ տեսան այդ հրաշքը, որ ծովի ալիքների վրայով մոտենում էր իրենց, մինչև հագուստները տարուբերվում էին քամուց: Այդ պատկերից վախեցած՝ նրանք սկսեցին աղաղակել, մտածելով, որ դա ուրվական էր, որը քայլում էր ալիքների վրայով: Ապա, փոթորկի ու մթության մեջ, երբ ծովն այնքան մեծ, իսկ նրանց նավակն այնքան փոքր էր թվում, նրանք լսեցին իրենց Տիրոջ կատարյալ խաղաղ և հուսադրող ձայնը. «Ես եմ մի վախենաք» (Մատթեոս 14.27):

Սուրբ գրքի այս պատմությունը հիշեցնում է մեզ, որ երբ գալիս ենք Քրիստոսի մոտ, ձգտում ենք կատարելությանը, կամ երբ Նա գալիս է մեզ մոտ, որ բերի մեզ այդ կատարելությունը, առաջին քայլից հետո մեզ կարող է պատել իսկական սարսափ: Չպետք է այդպես լինի, բայց երբեմն պատահում է: Ավետարանի ամենամեծ արտասովոր երևույթն այն է, որ մեզ առաջարկվող օգնության և անվտանգության աղբյուրը մի բան է, որից մենք կարող ենք փախչել մեր մահկանացու անհեռատեսության պատճառով:

Ես տեսել եմ, թե ինչպես են հետաքրքրվողները փախչում մկրտությունից՝ անհասկանալի պատճառներով: Ես տեսել եմ, թե ինչպես են երեցները փախչում միսիայի կանչից: Ես տեսել եմ, թե ինչպես են իրար սիրող զույգերը փախչում ամուսնությունից: Ես տեսել եմ, թե ինչպես են անդամները փախչում դժվարին կոչումներից: Եվ ես տեսել եմ, թե ինչպես են մարդիկ փախչում Եկեղեցու անդամությունից:

Շատ հաճախ մենք փախչում ենք հենց այն բաներից, որոնք կփրկեն և կհանգստացնեն մեզ: Շատ հաճախ մենք նայում ենք ավետարանական պարտավորություններին որպես բաների, որոնցից պետք է խուսափել, իսկ հետո հրաժարվել:

Երեց Ջեյմս Ի. Թալմիջն (1862–1933) ասել է. «Յուրաքանչյուր չափահաս մարդու կյանքում լինում են այնպիսի փորձառություններ, ինչպիսիք են փոթորկի մեջ հայտնված նավաստիների մարտերը հակառակ փչող քամիների և անհյուրընկալ ծովերի հետ. հաճախ պայքարով և վտանգներով լի գիշերից հետո է գալիս օժանդակությունը, և ապա, շատ հաճախ փրկարար օգնությունը սխալմամբ ընկալվում է որպես ավելի

մեծ սպառնալիք: [Բայց] ինչպես [այս աշակերտները] անհանգիստ ծովում, այնպես էլ բոլոր նրանք, ովքեր հավատքով ջանասիրաբար աշխատում են, լսում են Ազատարարի ձայնը. «Ես եմ՝ մի վախենաք»:<sup>1</sup>

### Եկեք Նրա մոտ

Փրկիչին ընդունելու, Նրա մոտ գալու և Նրա կատարելությանը ձգտելու այս հրավերը հիանալի է, քանի որ յուրաքանչյուրը կարող է դա անել: Դա չի նշանակում, որ բոլորը, ում ճանաչում էք, ցանկանում են պահել պատվիրանները, կամ որ բոլորը, ում կհանդիպեք, պահելու են պատվիրանները: Սակայն դա նշանակում է, որ հնարավոր է պահել պատվիրանները՝ առանց դրա համար որևէ հատուկ պարզ կամ ժառանգություն ստանալու:

Ես սրտանց աղերսում եմ հավատ, որը «փայլուն, պայծառ, մաքուր և ամուր է», որ Քրիստոսը «լինի [մեր] մշակույթի յուրաքանչյուր ոլորտում»<sup>2</sup> և մեր կյանքում ձգտենք Քրիստոսի կատարելությանը (տես Եփեսացիս 4.13):


Կյանքը մարտահրավերներ կնետի ձեզ: Դժվարություններ կգան: Մրտեր կկոտրվեն: Հարազատներ կմահանան: Այսպիսով, ուր էլ որ գնալու լինեք, նախ ուղի հարթեք դեպի Քրիստոսը: Հիշեք, որ Նրա տառապանքը և Հարությունը հնարավոր են դարձնում մեր հաղթանակը դժվարությունների և մահի վրա: Չեր ուխտերը կապեք Նրա հետ և պահեք դրանք ճամփորդության ընթացքում:

Իմ բոլոր թույություններով հանդերձ, որոնք ես պատրաստակամորեն ընդունում եմ, ես փափագում եմ, որ մենք աճենք մինչև «Քրիստոսի կատարեալ հասակի չափովը»: Ես ուզում եմ գալ Նրա մոտ: Ես ուզում եմ, որ Նա, եթե հնարավոր է, գա ինձ մոտ: Եվ ես իսկապես ցանկանում եմ այդ օրհնությունները բոլորիդ համար: ■

*Հատված չափահաս երիտասարդներին նախընտրված բազմաարածաշրջանային հոգևոր երևելույի ելույթից՝ «Քրիստոսի կատարեալ հասակի չափովը», որը տեղի է ունեցել Սթենֆորդում (Կալիֆորնիա, ԱՄՆ)՝ 2020 թվականի փետրվարի 9-ին:*


### ՆՂՈՄՆԵՐ

1. James E. Talmage, Jesus the Christ (1916), 337.
2. Eric Metaxas, Bonhoeffer: Pastor, Martyr, Prophet, Spy (2010), 248.



# Զգալ քահանայության գործությունը

*Կանանց, ովքեր օգնում են առաջնորդել  
Եկեղեցին, հարցրել են, թե քահանայության  
գործությունն ինչ ազդեցություն ունի  
նրանց կյանքում: Սա որոշ մտքեր,  
որոնցով նրանք կիսվել են:*



«Տղամարդիկ և կանայք ունեն տարբեր, բայց հավասարապես կարևոր պարտականություններ տանը և Եկեղեցում: Քահանայության գործությունը կարող է օգնել յուրաքանչյուր անձնավորության կատարել այդ պարտականություններն ի օգուտ բոլորի:

Քանի որ քահանայության գործությունը երկրի վրա է այսօր, մեծ օրհնություններ են հասանելի Եկեղեցու բոլոր արժանի անդամներին, լինեն նրանք ծեր թե երիտասարդ, տղամարդ թե կին, ամուրի թե ամուսնացած»:

-Նախագահ Ջոյ Դ. Ջոնս, Երեխաների Միության գերագույն նախագահ

«Ծառայությունը մեծացնում է մեր հոգին, ընդլայնում մեր հեռանկարը և թույլ տալիս մեզ լիովին հուսալ Աստծո գործությանը: Տերը գիտի սա, սակայն սատանան նույնպես: Մեզ Աստծո գործությունից հեռու պահելու իր մշտական փորձերով հակառակորդը ձգտում է ճնշել մեզ կամ ստիպել մեզ զգալ, որ այն, ինչ մենք առաջարկում ենք, անբավարար է: . . .

. . . Երբեք մի կասկածեք բարություն անելու հարցում:

Ուրիշներին ծառայություն մատուցելը նպատակալացորեն մեր կյանքի մասը դարձնելով մենք կբացահայտենք Աստծո խորհուրդները: Մենք կգտնենք խաղաղություն, ուժ և ավելի կգորանանք, երբ ծառայենք մեր Փրկիչին՝ Հիսուս Քրիստոսին»:

-Նախագահ Բոննի Հ. Քորդոն, Երիտասարդ Կանանց գերագույն նախագահ

«Շատ հաճախ, կանայք համեմատում են իրենց ուրիշների հետ: Սակայն մեզանից ոչ ոք իրեն լավ չի զգում՝ ուրիշների հետ համեմատվելիս: Յուրաքանչյուր կին ունակությունների և տաղանդների եզակի խառնուրդ է և դրանք Աստծո պարգևներն են: Այն, որ ես և դուք նման չենք, կամ որոշ կանայք նման չեն իրար, մեզ չի դարձնում ավելի լավը կամ վատը: Մենք պետք է գտնենք մեր պարգևները և զարգացնենք դրանք՝ հիշելով, թե ով է դրանք մեզ տվել, ապա մենք պետք է ծառայեցնենք դրանք Նրա նպատակներին: Երբ մենք կիսվում ենք մեր պարգևներով ուրիշներին օրհնելու համար, մենք զգում ենք քահանայության գործությունը մեր կյանքում»:

-Նախագահ Ջին Բ. Բինգհեմ, Սփոփող Միության գերագույն նախագահ

«Հաճախակի հնարավորություններ փնտրեք ավելի շատ բան իմանալու «քահանայության վարդապետության» մասին: Յուրաքանչյուրս պետք է անձնապես փնտրենք այդ հասկացողությունը:

Սուրբ գրությունները և վերջին օրերի մարգարեների խոսքերն ուսումնասիրելը հարուստ հիմք կստեղծի այդ գիտելիքի

զարգացման համար: Ինչպես նաև՝ Աստծո պատվիրաններին հնազանդվելը և քահանայության արարողությունների միջոցով կապած ուխտերին հավատարիմ ապրելը: Հասկացողությունը մեզ տրվում է «տող առ տող, ցուցում առ ցուցում» [2 Նեփի 28.30]: Անձնական հայտնության միջոցով այն «կիջնի» մեր հոգիների վրա, «ինչպես ցողը երկնքից» [Վևու 121.45]:

-Քույր Լիզա Լ. Հարկնես, Երեխաների Միության գերագույն նախագահության առաջին խորհրդակալ

«Մեզանից յուրաքանչյուրն ուղի է անցնում: . . . Մենք անցնում ենք բարդ հարաբերությունների, ֆինանսական մարտահրավերների և մտավոր ու ֆիզիկական առողջության հետ կապված դժվարությունների միջով: Մենք ունենում ենք բարդ հանձնարարություններ և ամենօրյա գործեր: Ումանք անցնում են ուղին տրտում, կամ նույնիսկ միայնակ կամ ձանձրացած: Մեր մարտահրավերները տարբեր են, բայց բոլորս էլ ունենք դրանք:

Եթե պահում ենք մեր ուխտերը, չի նշանակում, որ կազատվենք այդ մարտահրավերներից, այլ նշանակում է, որ Տերը խոստանում է լինել մեզ հետ:

-Քույր Միշել Քրեյգ, Երիտասարդ Կանանց գերագույն նախագահության առաջին խորհրդակալ


«Ես պատկերացնում եմ քահանայության գործությունը որպես մի նուրբ սպիտակ թել, որը գալիս է Աստծուց և պտտվում է ներս ու դուրս, վեր ու վար, կարծես թե ունի իր սեփական ուղղությունը մեր կյանքում: Բայց ժամանակի ընթացքում բացահայտվում է մի բարդ օրինաչափություն: Այդ նախագիծը ծածկում է Աստծո զոհասեղանը՝ ամենասուրբ տեղը, որտեղ մենք ուխտ ենք կապում երկրի վրա և երկնքում: . . .

Ամեն անգամ, երբ սրբազան տաճարում զոհասեղան եմ տեսնում, ես զգում եմ, որ դա տաճարի ամենահզոր խորհրդանիշներից մեկն է, թե ինչպես է Տերն Իր գործությունը տրամադրում Իր հավատարիմ զավակներին, որպեսզի հավաքվեն և կապեն միմյանց հետ ամուր կապեր»:

-Քույր Շերոն Յուբենկ, Սփոփող Միության գերագույն նախագահության առաջին խորհրդակալ

«Իմ սեփական կյանքի փորձառությունների շնորհիվ ես գիտեմ, որ Տիրոջ պատվիրանները պահելը, հավատ ունենալը և Նրան լիովին վստահելը Նրա քահանայության գործյանը արժանանալու եղանակներն են: . . .





... Հավատարիմ մնալով՝  
մենք կարող ենք ստանալ  
քահանայության այդ  
գորություններն ու  
օրհնություններ-  
ը մեր կյանքի  
բոլոր ոլորտներում: Այն կտա  
մեզ պաշտպանություն, մխիթարություն, ուժ,  
խաղաղություն և խոստումներ, որոնք հասնում են  
հավերժություններ: Քահանայության այդ գորու-  
թյան շնորհիվ Սուրբ Հոգին նաև օգնում է ինձ կյան-  
քում ունենալ փորձառություններ, որոնք շարունակում են  
գորացնել իմ վկայությունն ու հավատն առ Աստված»:

-Քրիստինա Բ. Ֆրանկո, Երեխաների Միության գերագույն նախագահու-  
թյան երկրորդ խորհրդակալ

«Տարիներ են անցել այն օրվանից, երբ ես ստացել եմ իմ հայրա-  
պետական օրհնությունը, բայց ես վառ հիշողություններ ունեմ կապված այդ  
փորձառության հետ: . . .

Այդ փորձառությունն ազդել է շատ որոշումների վրա, որոնք ես կայաց-  
րել եմ իմ կյանքի ընթացքում: Ես գիտեի, որ այդ ցանկալի օրհնություննե-  
րը ստանալու համար պետք է կատարեի իմ մասը:

Այժմ ես հասկանում եմ, որ մեր Հայրը նույնիսկ ավելին է ցանկանում, որ ես  
ստանամ, նույնիսկ ավելին, քան նշված է իմ հայրապետական օրհնության  
մեջ»:

-Քույր Բեթի Քրեյվեն, Երիտասարդ Կանանց գերագույն նախագահության երկրորդ  
խորհրդակալ

«Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցուն ես միացել եմ 26 տարե-  
կանում: Չնայած սիրտս հանգիստ էր, մինչ հետևում էի Աստծո հետ ուխտ  
կապելով Նրա կողմից օրհնվելու ցանկությանը, ես գիտեմ, որ այդ ուխտի իմ  
ընկալումն այդ ժամանակ փոքր սերմի էր նման:

Մինչ տարիներ էին անցնում և ես ջանքեր էի գործադրում պահելու  
մկրտության այդ ուխտերը և ուրիշ ուխտեր, որոնք կապել էի Երկնային Հոր  
հետ, ես զգում էի, որ Նա օրհնում էր ինձ ավելի խորը հասկացողությամբ՝ Իր,  
իմ Փրկիչի և իմ դերի մասին՝ որպես Երկնային Ծնողների ուխտյալ դուստր»:

-Ռեյնա Ի. Ըբարթո, Սփոփող Միության գերագույն նախագահության  
երկրորդ խորհրդակալ ■

# Ջեյնն ուրախ անցավ ճամփորդությունը

*Արդյո՞ք մենք Ջեյն Մենինգ Ջեյմսի նման վճռական ենք՝ անցնելու մեր ճամփորդությունը հավատքով:*

**Ջ**եյն Մենինգ Ջեյմսը հոգնել էր քայլելուց, սակայն նա հրաժարվեց կանգ առնել:

Նրա ավագ որդին՝ Միլվեստերը, բավականին մեծ էր և կարող էր քայլել կառքի կողքով: Սակայն փոքրիկ Միլասին, ով ծնվել էր ճամփորդության ընթացքում, պետք էր գրկել: 1847 թվականն էր, և Ջեյմսերի ընտանիքը շուտով միանալու էր առաջին ռահվիրաներին, ովքեր հասել էին Մեծ Սոլթ Լեյքի հովիտ:

Առաջին անգամը չէր, որ Ջեյնը երկար ճամփորդում էր:

Չորս տարի առաջ նրա ընտանիքը լքել էր արևելյան քաղաքի իրենց տունը՝ միանալու Նավուի սրբերին արևմտյան սահմանի եզրին: Ճամփորդությունը գետով կտևեր ընդամենը մի քանի օր: Բայց քանի որ այդ ժամանակ Միացյալ Նահանգներում շատ սևամորթներ ստրուկ էին, Ջեյնի ընտանիքը հաճախ պետք է իրենց ազատ լինելու փաստը հավաստող թղթեր ներկայացնեին Ռոշ տեղերում խիստ օրենքներ էին գործում, որոնք թույլ չէին տալիս սևամորթներին ճանապարհորդել այդ տարածքով, ինչպես նաև մեկ անձի համար գանձում էին մինչև 500 դոլար:

Գուցե այս մեծ գումարի կամ այլ նախապաշարմունքների պատճառով նավակի անձնակազմը հրաժարվեց որևէ տեղ



տանել Ջեյնին և նրա ընտանիքի անդամներին: Հուսահատվելով՝ նրանք թողեցին իրենց ունեցվածքի մեծ մասը և ուղքով ճանապարհ ընկան՝ տանելով ինչ կարող էին:

Ջեյնի ընտանիքը քայլեց ավելի քան 800 մղոն (1287կմ): Նրանք քայլում էին անձրևների տակ և խավար գիշերներով: Մի անգամ նրանք անցան անտառի միջով՝ քնելով բաց երկնքի տակ: Երբ արթնացան, նրանց հագուստը ցրտահարությունից սպիտակել էր:

«Մենք այնքան էինք քայլել, որ մեր կոշիկները մաշվել էին, իսկ մեր ոտքերը ցավում, ճաքճքում և արյունահոսում էին, - հիշում էր Ջեյնը»: . . .

«Մենք խնդրեցինք Աստծուն՝ Հավերժական Հորը, բուժել մեր ոտքերը, և մեր աղոթքները պատասխանվեցին»:<sup>1</sup>

Անցնելով այս դժվարին ճանապարհը, Ջեյնը օրհներգեր էր երգում իր ծնողների և ընտանիքի մյուս անդամների հետ՝ փառաբանելով Աստծուն: Վերջապես, գրեթե երեք ամիս քայլելուց հետո, նրանք հասան Նավու: Տարիներ անց, երբ հավատարիմ սրբերը պետք է անցնեին հարթավայրերը, Ջեյնը առաջին ռահվիրաներից էր, ով ճանապարհ ընկավ: ■

### ՀՐՈՒՄ

1. "The Autobiography of Jane Manning James," [history.churchofjesuschrist.org/article/jane-manning-james-life-sketch](http://history.churchofjesuschrist.org/article/jane-manning-james-life-sketch).

ԿԵՐՁԻՆ ՕՐԵՐԻ  
ՍՐԲԵՐԻ ՁԱՅՆԵՐԸ

# Անդրե և Ջիզելեն Պիմենտել Ռիո դե ժանեյրո, Բրազիլիա

## **Ջիզելեն**

*Տաճարում կնքվելուց  
հետո մեզ մոտ  
շատ բաներ լավ  
չէին ընթանում:*

*Մենք մտածեցինք,  
որ գոցել եկել է  
ժամանակը, որ  
վերադարձնանք  
Բրազիլիա:*

## **Անդրե**

*Մեր եպիսկոպոսն  
ասաց, որ մենք  
կարող էինք օգնել  
Բրազիլիայի շատ  
անդամների և  
սճել այնպես,  
ինչպես չէինք  
կարող Միացյալ  
Նահանգներում:*

*Նա մեզ խորհուրդ  
տվեց մոտ մնալ  
Եկեղեցուն: «Գնացեք  
Բրազիլիա և  
ծառայեք Տիրոջը»,  
- ասաց նա:*

## **ԲԱՅԱԶԱՅՏԵՔ ՍԿԵԼԻՆ**

• Կարդացեք Պիմենտել-  
ների պատմությունը:  
[ChurchofJesusChrist.org/go/32117](http://ChurchofJesusChrist.org/go/32117):

ԼՈՒՍՈՒՊՈՒՄԱՐԸ: ԵՌՈՒԻ ԲԵՐԼԻՆ



# Շտապել հաղորդության ժողովին

Էլիս Բրանթինգհամ, Արիզոնա, ԱՄՆ

*Ես կարծեցի, որ մենք կրկին ուշացել էինք հաղորդությունից:*

Երբ մենք Միացյալ Նահանգներից տեղափոխվեցինք Վիետնամ, ես և ամուսինս որոշեցինք երբեք չբացակայել եկեղեցուց: Մեկ տարվա ընթացքում մենք չէինք բացակայել որևէ կիրակնօրյա ժողովից, սակայն հաճախ ուշանում էինք ու չէինք մասնակցում հաղորդության արարողությանը: Մեր հաղորդության ժողովը սկսվում էր առավոտյան 8.30-ին: Երեք փոքրիկների հետ ժամանակին եկեղեցու համար պատրաստվելը հաճախ անհնար էր թվում:

Ընտանիքով որոշեցինք, որ մենք պետք է մշտապես ժամանակին տեղ հասնեինք ու ճաշակեինք հաղորդությունը: Դժվար էր, սակայն մենք ժամանակին եկեղեցի հասանք չորս կիրակի շարունակ: Ես նկատեցի մեր ջանքերի

առաջ բերած փոփոխությունը: Շաբաթվա ընթացքում մենք ունենում էինք ավելի շատ հոգևոր փորձառություններ:

Հաջորդ կիրակի, այնուամենայնիվ, մենք ուշ արթնացանք: Արդեն ժամը 7.30 էր: Ես ամուսնուս ասացի, որ հույս չունեմ, որ կհասցնենք, բայց հետո մտածեցի, թե ինչպես կօրհնվենք, եթե ամեն ինչ անենք հասցնելու համար: Ուստի, մենք շտապ սկսեցինք պատրաստվել:

Երբ եկեղեցի հասանք, մենք 20 րոպե ուշացել էինք: Ես ինձ պարտված էի զգում: Երբ ներս մտանք, երգ հնչեց, իսկ երբ ես բացեցի դուռը, մեկը մոտենում էր ամբիոնին, որպեսզի աղոթեր:

«Արդյո՞ք դա բացիչ օրհներգն էր»: Շշուկով հարցրի դռան մոտ կանգնած միսիոներին:

«Այո»,-ասաց նա:

«Այսօր մենք ուշ ենք սկսել»:

Ես ապշած էի: Կարծում էի, թե նորից ձախտղել

էինք, սակայն եկեղեցի էինք հասել ճիշտ ժամանակին: Արցունքներս ակամայից հոսեցին, մինչ ես զգացի Երկնային Հոր սերն իմ փոքրիկ ընտանիքի ու իմ հանդեպ:

Ավելի ուշ մենք իմացանք, որ երբ այդ կիրակի միսիոները եկել էին եկեղեցի, նրանք նկատել էին, որ ոչ ոք հաց չի բերել հաղորդության համար: Մոտակայքում խանութ չկար, իսկ Վիետնամում հաց գտնելը դժվար գործ էր: Մի պահ խուճապի մատնվելուց հետո երեցները հիշել են, որ տանը հաց ունեն:

Մի քանի օր առաջ երեցները եկել էին մեր տուն ընթրելու: Այդ երեկո ես նրանց համար հաց էի թխել: Եկեղեցին կիրակի առավոտյան ուշ էր սկսվել, քանի որ երեցները վազել էին տուն բերելու այն հացը, որը ես էի թխել նրանց համար:

Աստված տեսնում է մեր ջանքերը, երբ մենք ձգտում ենք պահել Նրա պատվիրանները: Չնայած մենք երբեմն թերանում ենք, Նա սիրում է մեզ և կպատրաստի ուղիներ հաջողության հասնելու համար, նույնիսկ, եթե դա պարզապես ժամանակին եկեղեցի հասնելն է: ■



# «Ես ուզում եմ գնալ դրախտ»

Պասկալ Կոուամեն Կոուասի, Աբիջան, Փղոսկրի ափ

*Երբ ես աղոթեցի և հարցրի Աստծուն այս նոր ուղու մասին, ես ասելի համոզվեցի, որ այն, ինչ գտել եմ, ճշմարիտ է:*

Ես մեկ այլ եկեղեցու նվիրյալ անդամ եմ եղել, սակայն հետո սկսեցի ուսումնասիրել քավարանի վերաբերյալ նրանց ուսմունքները: Այդ զաղափարն ուսուցանում է, որ հոգին, ֆիզիկական մահից հետո հայտնվում է բանտի նման մի վայրում, որտեղ այն պետք է մաքրվի նախքան դրախտ գնալը:

Մինչ մտածում էի քավարանում տանջվող հոգիների մասին, ես սկսեցի խորհել իմ իսկ հոգևոր ապագայի և Հիսուս Քրիստոսի հետ իմ հարաբերությունների շուրջ: Ես սկսեցի աղոթել. «Ի՞նչ պետք է անեմ, որպեսզի ազատվեմ քավարանից: Ես ուզում եմ գնալ դրախտ»:

Առաջին բանը, որ միտքս եկավ, տասը պատվիրանները պահելն էր: Այնպիսի զգացողություն ունեցա, որ եթե անեի դա, Տիրոջ շնորհին ինձ թույլ կտար ազատվել քավարանից: Ես պարտավորվեցի պահել պատվիրանները և սկսեցի ավելի հաճախ ծոմ պահել, աղոթել, ուսումնասիրել սուրբ գրությունները և խորհրդածել:

Այդ ընթացքում ես հուշում ստացա մի արտասովոր հարց տալու հիվանդանոցի բժիշկներից մեկին, որտեղ ես աշխատում էի որպես գլխավոր հաշվապահ:

«Բժիշկ Թիբաութ,- ասացի ես,- Ձեր եկեղեցում ներկա՞ է Տեր Հիսուս Քրիստոսը»:

Նա ասաց, որ ինքը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցու անդամ էր: Այդ պահից սկսած Հոգին առաջնորդեց մեր զրույցը: Ես հարցրի նրան՝ իր և իմ եկեղեցիների միջև եղած տարբերությունների մասին: Նա պատմեց ինձ Մորմոնի Գրքի մասին: Մինչ մենք զրուցում էինք, սիրտս ուրախությամբ լցվեց: Ես զգացի, որ ստանում էի իմ աղոթքների պատասխանը:

Երկու օր անց միսիոներները տվեցին ինձ Մորմոնի Գիրքը, որը ես կարդացի և ուսումնասիրեցի նրանց հետ: Հրաշալի էր, որ սուրբ գրություններից սովորում էի նոր բաներ: Ես սկսեցի պահել Իմաստության Խոսքը:

Երբ հասկացա, որ կորցրել էի իմ եկեղեցու հանդեպ ունեցած հետաքրքրությունը, որտեղ այնքան ներգրավված էի, սկսեցի խորհել, թե ինչ էր տեղի ունենում: Ես աղոթեցի ու հարցրի Աստծուն այս նոր ուղու մասին: Այդ ժամանակ ես ավելի համոզվեցի, որ այն ինչ գտել եմ, ճշմարիտ է: Ես որոշեցի միանալ

Եկեղեցուն, չնայած գիտեի, որ հալածանքների կհանդիպեմ:

Հալածանքները սկսվեցին, սակայն Տերն ուժ տվեց ինձ: Ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցին իմ անկեղծ աղոթքի պատասխանն էր. «Ես ուզում եմ գնալ դրախտ»: Ես գիտեմ, որ կարող եմ գնալ այնտեղ մահից հետո, եթե հավատարիմ մնամ Աստծո պատվիրաններին: ■



Ամբողջ կեսօրն անցկացրի հեծանիվի վրա՝ մի գործատեղից մյուսը գնալով և աշխատանք փնտրելով:





Արտուր Զ. Բոս  
Յոթանասունկից

# ՀԱՂԹԱՀԱՐԵԼ

## ԱՇԽԱՐՀԻԿ ՀՈԳՍԵՐԸ

*Աշխարհիկ հոգսերը չպետք է շեղեն ինձ Աստծո խոսքին հնազանդվելուց:*

Նույնիսկ երբ մեզ մեծ օրհնություններ են խոստացված, եթե մեզ մտահոգում են աշխարհիկ հոգսերը Տիրոջ կամքի փոխարեն, մենք կկորցնենք այդ օրհնությունները: Մա հաստակ երևում է Վերականգնման վաղ շրջանի մի մարդու փորձառությունից:

Ձեյմա Քովիլը մեկ այլ հավատքի սպասավոր է եղել 40 տարի, սակայն վերականգնված ավետարանը լսելուց հետո նա «ուխտեց, որ կհնազանդվի ցանկացած պատվիրանի, որը Տերն իրեն կտա Մարգարե Ջոզեֆի միջոցով» (Վարդապետություն և Ուխտեր 39, բաժնի նախաբան): Ջոզեֆի միջոցով Տերն ասում է Քովիլին. «Ականջ [դիր] իմ խոսքին, որն ասում է քեզ. Վեր կաց ու մկրտվիր, և լվա քո մեղքերը, կանչելով իմ անունը, և դու կստանաս իմ Հոգին, և այնպիսի մեծ օրհնություն, ինչպիսին երբևէ չես իմացել» (Վաղապետություն և Ուխտեր 39.10):

Սակայն Քովիլը շուտով «մերժեց Տիրոջ խոսքը և վերադարձավ իր նախկին սկզբունքներին ու մարդկանց» (Վարդապետություն և Ուխտեր 40, բաժնի նախաբան): Խոսելով Քովիլի մասին, Տերն ասել է, որ «նա ուրախությամբ ընդունեց խոսքը, բայց Մատանան անմիջապես գայթակղեց նրան. և հալածանքի վախն ու աշխարհիկ հոգսերը պատճառ դարձան, որ նա մերժի խոսքը» (Վարդապետություն և Ուխտեր 40.2): Աշխարհիկ հոգսերի վերաբերյալ իր անհանգստության պատճառով Քովիլը կորցրեց օրհնությունները, որոնք նրան խոստացել էր Տերը:

### Արդյոք մնամ, թե՞ գնամ

Իմ կյանքի օրինակով ես հասկացել եմ, որ մենք չպետք է թույլ տանք, որ աշխարհիկ հոգսերը շեղեն մեզ Տիրոջը հնազանդվելուց: Ես մեծացել եմ հրաշալի և սիրառատ տան մեջ, որտեղ ծնողներս մեզ

լավ ուսուցանել են ավետարանը և մեր հանդեպ նրանց սերը արտացոլել է Երկնային Հոր սերն Իր գավակների հանդեպ:

Երբ 16 տարեկան էի, ինձ հրավիրեցին աշխատելու ԱՄՆ-ում գտնվող ագարակում՝ մի օր այնտեղ իմ սեփական տունը կառուցելու հեռանկարով: Դա ինձ գրավեց, քանի որ իմ հայրենիքը՝ Նիդերլանդները, խիտ բնակեցված փոքրիկ երկիր է:


Փաստորեն, հորս նախահայրերը մեկ այլ վայրում ապրելու նման ցանկություն են ունեցել: Նրանք տեղափոխվել են Ինդոնեզիա, որը նախկինում հոլանդական գաղութ էր: Ես լիովին հասկանում եմ, թե ինչու: Ինդոնեզիան ունի լավ կլիմա, գեղեցիկ բնապատկեր և մեծ տարածք: Իմ գեներում առկա էր այդ նույն փափագը, որը ոգեշնչել էր իմ նախնիներին: Արդյո՞ք ես նույնպես պիտի հեռանայի իմ հայրենիքից՝ փնտրելով հաջողություն և արկածներ:

Արոշում կայացնելու այդ ժամանակահատվածում հայրս տվեց ինձ մի նամակի կրկնօրինակ, որը հասցեագրված էր նրան և նրա քույրերին շատ տարիներ առաջ իրենց միսիայի նախագահի՝ Դոնովան վան Դամի կողմից: Նախագահ վան Դամը խնդրել էր նրանց մնալ Նիդերլանդներում և կառուցել այնտեղ Եկեղեցին: Հայրս ասաց ինձ, որ նա որոշել էր ճիշտ այդպես անել: Եվ քանի որ նամակը հասցեագրված էր Բոմ ընտանիքին, այժմ իմ հերթն էր որոշելու, թե ինչ անել:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Եկեղեցու շատ անդամներ գաղթեցին Ամերիկա և Կանադա: Դա դեռևս շարունակվում էր մինչև 1970-ականները, անկախ այն բանից, որ Եկեղեցու ղեկավարները հորդորում էին անդամներին մնալ իրենց իսկ երկրներում և ամրացնել Եկեղեցին իրենց բնակավայրերում: Աղոթքով ես նույնպես որոշում կայացրի մնալ և կառուցել Եկեղեցին

ՆԱԽԱԵՐԸ: ԼՐԱՄ ՕՅՄԻՆԸ

# ԱՆԳԼԻԱ



Նիդերլանդներում, լիովին չգիտակցելով, թե դա ինչ էր նշանակելու ապագայում:

## Որոշումներ, որոշումներ

Երբ 1970-ականների վերջին ես ավարտեցի ավագ դպրոցը, Հոլանդիայի տնտեսությունն անկայուն վիճակում էր: Գործազրկության մակարդակը բարձր էր: Ընդհանուր առմամբ, ամեն ինչ շատ մռայլ էր թվում: Ավարտողների համար դժվար էր որոշել, թե ինչ անել հաջորդիվ:

Հայրս ծառայում էր որպես ճյուղի նախագահ: Ժամանակ առ ժամանակ նա քննարկում էր ինձ հետ լիաժամկետ միսիա ծառայելու հնարավորությունը: Իհարկե, դա հրաշալի կլիներ: Իմ ամբողջ կյանքում ես անհամբեր սպասել էի դրան:

Սակայն ես չէի պատկերացնում, թե միսիա ծառայելը ինչպես կարող էր օգնել ինձ ապահովել իմ ապագա ընտանիքը: Մանկուց միշտ մեծ ցանկություն եմ ունեցել մի օր գտնելու իմ կյանքի սերը և միասին կառուցելու մեր ընտանիքը:

Այդ ժամանակ ես 17 տարեկան էի, և չիմանալով, թե հաջորդն ինչ անել, ես սկսեցի կրթության իմ հաջորդ փուլը: Սակայն մի քանի շաբաթ անց ես հասկացա, որ ուսման այս ոլորտը ինձ երջանկություն չէր պարգևելու: Ես կասկածում էի, թե դա ինձ կայուն աշխատանքով կապահովեր: Ես մտածեցի կրթությունս կիսատ թողնելու մասին:

Ծնողներիս դա դուր չեկավ: Նրանք ասացին ինձ, որ ես կարող էի թողնել կրթությունս միայն այն դեպքում, եթե աշխատանք գտնեի: Նրանք հավանաբար կարծում էին, որ ֆինանսական ճգնաժամի պատճառով ես ոչ մի գործ չէի գտնի: Ամբողջ կեսօրն անցկացրի հեծանիվի վրա՝ մի

գործատեղից մյուսը գնալով: Վերջապես մի ընկերություն վարձեց ինձ որպես պահեստի աշխատող:

## Իմ ծրագիրը

Չնայած ես անցա այս ժամանակավոր աշխատանքին, ես ծրագիր ունեի: Ես պատրաստվում էի ոստիկան դառնալ: Կառավարության համար աշխատելը կայուն միջոց կլիներ իմ ապագա ընտանիքն ապահովելու համար, և ամեն ինչ կստացվեր:

Հիշում եմ այն օրը, երբ ես գնացի քննություններ հանձնելու՝ ոստիկանության դպրոց ընդունվելու համար: Վաղ առավոտյան ես գնացք նստեցի և ամբողջ օրվա ընթացքում զանազան թեստեր էի հանձնում: Օրվա վերջում ինձ կանչեցին գրասենյակ: Ինձ ասացին, որ ես անցել եմ բոլոր քննությունները, և նրանք կցանկանային ինձ ընդունել, բայց քանի որ 17 տարեկան էի, ես չափազանց երիտասարդ էի: Նրանք ասացին ինձ, որ կրկին փորձեմ մեկ տարի անց:

Աշխարհը փլվեց ինձ համար, և տան ճանապարհին ես անընդհատ մտածում էի. «Հիմա ի՞նչ անեմ»: Տանը հայրս լսեց իմ հիասթափությունների մասին և առաջարկեց օրհնություն տալ ինձ: Ես ակնկալում էի, որ Տերը կասեր ինձ, որ ամեն ինչ կստացվի, և ես հրաշքով կընդունվեի ոստիկանության ակադեմիա: Փոխարենը Տերն ասաց ինձ, որ եթե ես առաջնահերթությունը տամ Իրեն, ես միշտ իմ սեղանին հաց կունենամ և իմ ապագա ընտանիքի համար հոգ տանելու միջոցներ:

## Ավելի լավ ծրագիր

Ես ստացա իմ աղոթքների պատասխանը՝ որ Տիրոջն առաջնահերթություն տալու համար ես





# ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ



Երեք և Քույր Բոմերի ընտանիքը 2019 թվականին: Դրանից հետո ծնվել է ևս մեկ թոռնուհի:

պետք է ծառայեմ լիաժամկետ միսիայում: Ես միշտ ցանկացել եմ դա անել, սակայն չեմ իմացել, թե ինչ քայլեր ձեռնարկել դրա համար: Այժմ ես գիտեի, որ պետք ծառայելի միսիայում և ցանկանում էի անել դա որքան հնարավոր էր շուտ:

Այդ ժամանակ միսիայի վճարը հին հուլանդական արժույթով կազմում էր 10000 գիլդեր կամ մոտ մեկ տարվա աշխատավարձ: Ես շարունակեցի աշխատել պահեստում և մինչև 1981 թվականի ամառը ես հավաքել էի այդ 10000 գիլդերը: 18 տարիս բոլորեց: Հայրս՝ ճյուղի նախագահը, ինչպես նաև շրջանի և միսիայի նախագահները ասացին ինձ, որ ես դեռ շատ երիտասարդ եմ միսիայի համար: Այն ժամանակ ծառայելու համար պարտադիր էր լինել 19 տարեկան: Սակայն իմ 18 տարին լրանալուն պես ես ինքս այցելեցի բժշկին և ատամնաբույժին և խնդրեցի նրանց լրացնել իմ միսիոներական թղթերի համապատասխան մասերը:

Ինչ-որ կերպ ես կարողացա այնպես անել, որ իմ դեկավարները հարցազրույց անցկացնեն ինձ հետ և ներկայացնեն իմ դիմումը: Ապա մենք սպասում էինք: Ես չգիտեի, որ հայրս՝ ճյուղի նախագահը, ստացել էր նամակը: Դիմումը հետ էին ուղարկել նրան, նշելով, որ տարիքս չէր համապատասխանում: Սակայն հայրս դեռևս չէր ցանկացել կիսվել ինձ հետ դրանով, ուստի, նա շաբաթներ շարունակ պահում էր նամակն իր կոստյումի գրպանում և ինձ ոչինչ չէր ասում: Բարեբախտաբար, որոշ ժամանակ անց նա մեկ այլ նամակ ստացավ: Նամակում ասվում էր, որ ելնելով որոշ հանգամանքներից, Եղբայրները որոշել էին թույլ տալ երիտասարդներին շուտ մեկնել միսիայի՝ լավ պատրաստված լինելու դեպքում: Շուտով ես կանչվեցի ծառայելու և

նշանակվեցի Անգլիայի (Լոնդոն) Արևելյան Միսիայում: Իմ միսիան օրհնեց իմ ողջ կյանքը:

## Օրհնություններ Տիրոջից

Միսիայից վերադառնալուց հետո, երեք ամիս անց, ես հանդիպեցի իմ կյանքի սիրուն: Մեկ տարի անց մենք ամուսնացանք և կնքվեցինք Լոնդոնի (Անգլիա) Տաճարում: Տնտեսությունը դեռևս լավ վիճակում չէր, սակայն ես միշտ կարողանում էի աշխատանք ունենալ և ապահովել իմ ընտանիքին: Մեր սեղանին միշտ հաց է եղել և տանիք՝ մեր գլխավերևում:


Միսիայի ժամանակ այս հատվածը դարձել էր սուրբ գրությունների իմ սիրած հատվածներից մեկը. «Որքան որ դու կպահես Աստծո պատվիրանները, դու կբարգավաճես երկրում» (Ալմա 36.1): Սա ունենալով որպես ուղեցույց՝ ես որոշեցի վարվել հորս պես. մնալ Նիդերլանդներում և կառուցել Եկեղեցին իմ հայրենիքում:

Փոքրիկ ճյուղը, որտեղ ես մեծացել եմ, այսօր դարձել է հրաշալի ծովս, որտեղ մեր թոռնիկները վայելում են բազմաթիվ ընկերների ներկայությունը՝ հավաքված Երեյսաների միության մեծ դասարանում: Մեր որդիները լավ մասնագիտություններ ունեն և օրհնված են սեղանին հաց ունենալով: Ես տեսնում եմ, որ իմ որոշումներն ազդել են հաջորդ սերնդի վրա, ովքեր նույնպես ցանկանում են իրենց կյանքում առաջնահերթությունը տալ Տիրոջը:

Ես երախտապարտ եմ, որ իմ կյանքի վաղ շրջանում սովորեցի, որ ճիշտ որոշումն աշխարհիկ հոգսերը հաղթահարելն է և առաջնահերթությունը Երկնային Հորը տալը: Նա տվել է ինձ օրհնություններ, որոնք այլապես ես չէի ունենա: ■

# Երաժշտությունը պահենք

## ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՒՄ



Աղոթքը  
հոգու անկեղծ  
ցանկությունն է՝  
արտասանված  
կամ չարտասա-  
նված:



**Ջեն Փիլբորո**  
Եկեղեցու ամսագրեր

*Երաժշտությունը  
միշտ եղել  
է և կլինի  
երկրպագության  
հիմքում թե՛  
եկեղեցում և թե՛  
տանը:*

Եկեղեցու կազմավորումից ընդամենը մի քանի շաբաթ հետո Տերը պատվիրեց Էմմա Սմիթին «պատրաստել սրբազան օրհներգերի մի հավաքածու . . . որը հաճելի է ինձ, իմ եկեղեցում ունենալու համար» (Վարդապետություն և Ուխտեր 25.11): Սրբերին պետք էին եղանակներ՝ սովորելու նոր հայտնված ավետարանական ճշմարտությունները և միավորվելու Աստծուն փառաբանելու համար: Եվ օրհներգերը կլինեն նրանց երկրպագության և ուսումնասիրության հիմքում:

Տարիներ առաջ, երբ իմ ընտանիքը միացավ Եկեղեցուն, իմ ծնողները խրախուսեցին մեզ սովորել մեր նոր

հավատքի երաժշտությունը: Ես վառ հիշողություններ ունեմ կապված այդ ժամանակների հետ.

- Երբ իմ ընտանիքի հետ անգիր էինք սովորում «Աղոթքը հոգու անկեղծ ցանկությունն է» (*Օրհներգեր*, հ. 145) օրհներգը:
- Երբ լսում էինք «Ով Հայր իմ» (*Հիմներ և մանկական երգեր*, հ. 42) օրհներգը և սովորում, որ ես ունեմ Երկնային Հայր և Մայր, որոնց մի օր կարող եմ կրկին տեսնել:
- Երբ զգում էինք Աստծո սերը, մինչ երգում էինք «Իմ Երկնային Հայրը սիրում է ինձ» (*Երեխաների երգա-րան*, 16), չնայած ես ապրում էի

անապատում և իրականում երբեք յասամանի ծառ չէի տեսել:

Իսկ այժմ անցնենք 2020 թվականի փետրվարի վերջին տեղի ունեցած հաղորդության ժողովին: Մեր ծխի մի քանի անդամներ պայքարում էին քաղցկեղի դեմ, և ես խորը մխիթարություն զգացի, երբ ծխի երգչախումբը երգեց «Աստծո Սրբեր» (*Հիմներ և մանկական երգեր*, հ. 6) օրհներգը: Մի քանի շաբաթ անց տեղի ունեցան մի շարք անհանգստացնող իրադարձություններ. մեկուսացումներ, Եկեղեցու չեղարկումներ և մի շարք երկրաշարժեր և հետցնցումներ: Եվ ես մտովի սկսեցի կրկին երգել այդ օրհներգը.

*Ձեզ հետ եմ ես ընդմիջւո, չերկնչեք երբեք,  
Քանզի քո Աստվածն եմ ես, հասնելու եմ օգնության,  
Ես ուժ եմ ձեզ տալու, որ չարին հաղթեք,  
Բարձրացած իմ արդար բազկով սառնասզոր միշտ,  
սառնասզոր:*

Երբեմն թվում է, թե համընդհանուր և անձնական մարտահրավերները շատանում են գրեթե օրեցօր: Ավելի քան երբևէ մենք ունենք օրհներգերի, Երեխաների Միության երգերի և այլ սրբազան երաժշտության հոգևոր աջակցության կարիքը:

### Նպատակի կամ կարևորության փոփոխություն չկա

Ինչևէ, երբ մենք անցանք Եկեղեցու ժողովների երկժամյա ժամանակացույցի, ոմանք մտածում էին՝ արդյո՞ք երաժշտության դերը նվազել է մեր երկրպագության մեջ: Պատասխանն է՝ ոչ:

1. Սրբազան օրհներգերը շարունակում են մնալ յուրաքանչյուր հաղորդության ժողովի մի մասը, ինչպես նաև օգնում են նախապատրաստել մեր սրտերը հաղորդության արարողության համար: Երգչախմբային և ընդհանուր երգեցողությունը և այլ սրբազան երաժշտությունները նախկինի պես այժմ էլ կարող են օգտագործվել ժողովը իմաստալից դարձնելու համար COVID-19 համաճարակի ընթացքում սուրբ երաժշտությունը շարունակում է լինել կարճացված հաղորդության ժողովների կարևոր մասը, նույնիսկ երբ այն հնչում է միայն գործիքային եղանակով:
2. Մեր երեխաներն այժմ Երեխաների միությունում իրենց ժամանակի կեսն անցկացնում են ավետարանը երաժշտության միջոցով սովորելով:
3. Երկրորդ ժամին չափահասների և երիտասարդների դասարաններում բացի կամ փակիչ երգեր չկան: Բայց երաժշտությունը մենք կարող ենք շարունակել օգտագործել դասարաններում ուսուցանելու և ոգեշնչելու համար:
4. Այժմ թվային սարքերով ավելի հեշտ է լսել սուրբ երաժշտությունը՝ օգտագործելով Եկեղեցու Sacred Music հավելվածը:

### Ավելի քիչ դիտողություն, ավելի շատ ուշադրություն

Դեռևս որոշ թյուրիմացություններ են տեղի ունենում: Զատիկի մի կիրակի ուսուցիչը ներողություն է խնդրել Ավետարանի Վարդապետության իր դասարանից. «Ես գիտեմ, որ մենք չպետք է երգենք Կիրակնօրյա դպրոցում, սակայն ես շատ եմ ուզում, որ մենք միասին երգենք «Գիտեմ ապրում է Փրկիչն իմ» օրհներգը»: Այդ ուսուցիչը հավանաբար միայնակ չէ այս թյուրիմացության մեջ:

Իրականում երաժշտությունը շարունակում է նույնքան կարևոր լինել մեր երկրպագության ընթացքում, որքան միշտ եղել է: Այդ ամենի մասին են վկայում մեր օրհներգերի և մանկական երգերի հավաքածուների ներկայումս իրականացվող թարմացումները: Այդ ջանքերի շրջանակներում Եկեղեցու անդամներն ամբողջ աշխարհում ներկայացրել են 16000 նոր ուշադրավ օրհներգեր, երգեր և տեքստեր:

Բայց մեր կիրակնօրյա ժողովներում երգելու համար ավելի քիչ սահմանված ժամանակ ունենալու պատճառով, մենք պետք է ավելի մտածված և ուշադիր լինենք երաժշտությունը պլանավորելու և օգտագործելու հարցում:

Երկու հիմնական սկզբունք կարող են օգնել մեզ պահելու երաժշտությունը մեր երկրպագության հիմքում:



*Մի՞թե չկա մայր երկնքում,  
ճշմարտությունն հուշում է,  
որ մայրիկս էլ այդտեղ է:*

## ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԼԵՋՈՒ Է

Հրեշտակները և Աստծո ստեղծագործությունները փառաբանում են Նրան երգով (տես Ալմա 36.22 և Վարդապետություն և Ուխտեր 128.23):

Երաժշտությունը արտահայտում է հավատք (տես Գործք Առաքելոց 16.25):

Այն արտահայտում է դարձի և փրկության ուրախությունը (տես Ալմա 5.26 և Ալմա 26.13):

Եվ բոլորը կերպեն Տիրոջ գալուստի ժամանակ.

«Բոլորը կճանաչեն ինձ, ովքեր կման, նույնիսկ ամենափոքրից մինչև ամենամեծը, և կլցվեն Տիրոջ գիտությամբ, և կտեսնեն դեմ հանդիման, և կբարձրացնեն իրենց ձայնը, և միաձայն կերպեն այս նոր երգը» (Վարդապետություն և Ուխտեր 84.98, կարդացեք երգի բառերը 99-102 հատվածներում):

### 1. Ուսուցման մեջ անփոխարինելի

Գուցե մենք կարծում ենք, որ ելույթները և քննարկումները տանը և եկեղեցում ավետարանական ուղերձները հաղորդելու հիմնական միջոցներն են: Եվ մենք գուցե մեր ժամանակի մեծ մասը ծախսում ենք այդ տարրերի վրա: Բայց երաժշտությունը դեկորատիվ հավելում չէ: Այն գործյամբ և Հոգով ուսուցանելու հենց հիմքն է:

Ինչպես Պողոս Առաքյալն է խորհուրդ տվել վաղ շրջանի սրբերին՝ «Քրիստոսի խօսքը բնակույթի ձեռք միջումն առատապես ամեն իմաստությիւնով. Իրար սովորեցրէք եւ խրատեցէք, սաղմոսներով եւ օրհնութիւններով եւ հոգեւոր երգերով եւ շնորհքով օրհներգեցէք Տիրոջը ձեռք սրտերումը» (Կողոսացիս 3.16):

Երաժշտությունը կարող է ակնթարթորեն Հոգին հրավիրել ներկա լինել դասին կամ ժողովին: Կիրակնօրյա դպրոցի կամ *Եկ, հետևիր ինձ* ծրագրի քննարկման ընթացքում երգի ընտրությունն արժանի է նույն մտածված և աղոթքով խորհրդածությանը, ինչպես սուրբ գրությունները, որոնք մենք ընտրում ենք կարդալու կամ դասի այն մասը, որն ընտրում ենք կիսվելու համար: Աղոթքով ընտրված երաժշտությունը կարող է դիպչել սրտերին, թողնել հոգևոր տպավորություններ, որոնք կարող են պահպանվել ողջ կյանքում:

### 2. «Աղոթք ինձ համար»

Մենք բոլորս էլ երբեմն կարող ենք մեզ հուսալքված զգալ, երբեմն մեր ուղին գուցե հստակ չտեսնենք: Երբեմն կարող է թվալ, որ մենք պարզապես անընդհատ նույն հրատապ կարիքի համար աղոթում ենք՝

առանց որևէ պատասխան կամ լուծում ստանալու: Նման պահերին գուցե գայթակղվենք եզրակացնելու, թե Աստված չի մտահոգվում մեզ համար, կամ որ մենք արժանի չենք Նրա հոգատարությանը: Երբեմն կարող է նույնիսկ ցանկություն առաջանալ հրաժարվել աղոթքից:

Ահա մի մխիթարիչ ճշմարտություն, որին կարող ենք ապավինել այն պահերին, երբ մենք երկնքի հետ հոգևոր կապի պակաս ենք զգում. սրբազան երաժշտությունը իրականում կարող է *լինել* աղոթքի ձև: Տերն անձամբ բացատրեց դա, երբ հանձնարարեց Էմմային կազմել մեր առաջին երգարանը. «Քանզի իմ հոգին հրճվում է սրտաբույս երգով. այո՛, *արդարների երգն աղոթք է ինձ համար*» (Վարդապետություն և Ուխտեր 25.12, շեղագիրն ավելացված է):

Երբ մենք անկեղծորեն սրտաբույս երգենք Նրա համար, Տերը խոստացել է միշտ պատասխանել օրհնությունով. «Եվ այն կպատասխանվի օրհնությամբ նրանց գլխին: Ուստի, բարձրացրու սիրտդ և ցնձ» (Վարդապետություն և Ուխտեր 25.12-13):

Իմ կյանքի մի դժվարին շրջանում երկար ժամանակ չէի կարողանում գտնել



Երբ որ դիպչում եմ թավջութ վարդին կամ քայլում մեր յասամանի ծառի մուտով





Ձեզ հետ եմ ես ընդմիջո, չերկնչեք երբեք,  
Քանզի ես հասնելու եմ ձեզ օգնությամբ:



**ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ  
ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ**

«Երաժշտությունն ունի հոգևոր սննդով ապահովելու գործընթաց: Այն ունի բժշկող գործընթաց: Այն գործընթացն ունի օժանդակելու երկրպագությանը, թույլ տալով մեզ խորհելու Քավության և ավետարանի Վերականգնման մասին՝ իր փրկարար սկզբունքներով և վեհացման արարողություններով: Այն գործընթացն է տալիս, որպեսզի մենք արտահայտենք աղոթքով ծնված մտքերը և մեր վկայությունը բերենք սրբազան ճշմարտությունների վերաբերյալ»:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոն, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, «Արժանապատիվ երաժշտության գործընթացն ու պաշտպանությունը», *Ensign*, դեկ. 2009, 16:

Իմ սրտաբույս աղոթքների պատասխանները: Իմ թանկագին ընկերներից մեկն էլ իր որոշ դժվարությունների միջով էր անցնում: Քայց երբ մենք միասին նվագում և երգում էինք օրհներգեր և ավետարանական երգեր, մենք հաճախ մխիթարության գործը զգացողություն և վկայություն էինք ստանում: Ես այժմ հասկանում եմ, որ Տերը կատարում էր Իր խոստումը: Նա պատասխանում էր իմ սրտի երգերին՝ նորից ու նորից: Եվ դա իսկապես *օգնեց* ինձ բարձրացնել իմ սիրտը և առաջ շարժվել:

**Ամեն կիրակի**

Ամեն կիրակի, մենք կարող ենք վստահ լինել, որ ոմանք մեր ժողովներում, ոմանք մեր դասարաններում, և ոմանք էլ մեր ընտանիքներում գտնվում են անձնական տառապանքի խորը

ջրերում: Մյուսները կլինեն խաղաղ հովիտներում, որտեղ օրհնությունները հորդում են: Կլինեն այնպիսիք, որ պարզապես նոր են սովորում ավետարանի հիմնական ճշմարտությունները:

Եթե մենք մեր երկրպագության մեջ պահենք երաժշտությունն իր ուրույն տեղում, կարող ենք օգնել *բողոքին* հնարավորություններ գտնել՝ զգալու Հոգին, սովորելու ավետարանական ճշմարտությունները և փառաբանելու Տիրոջը Նրա բարության համար: Եվ մենք կարող ենք օգնել *բողոքին*, որպեսզի նրանց սրտերի երգերը պատասխան գտնեն այնպիսի եղանակներով, ինչպիսին միայն մեր սիրառատ, հավերժական Հայրը կարող է պատասխանել: ■







և գիտի, որ ես փորձում եմ սովորել: Ես ուրախանում եմ, երբ իմ երեխաները հարցնում են. «Ինչպե՞ս կարող եմ սա ավելի լավ անել» և կարծես թե ցանկանում են բարելավել: Ի վերջո, ես կարող եմ այդպիսին լինել Երկնային Հոր համար:

Երբ այս բոլոր մտքերը պատվում էին զլխումս, ես հիասթափության մեկ այլ պահ ևս ունեցա: «Իսկ եթե որպես ծնող իմ թույլ տված սխալները վնասե՞ն իմ երեխաներին», մտածեցի ես: «Ես չեմ ուզում խոչընդոտել նրանց առաջընթացին, նույնիսկ եթե այդ ընթացքում ես հրաշալի արդյունքի հասնեմ»:

Կրկին մտքիս եկավ երեխաներիս ավելու պատկերը: Այն բանից հետո, երբ դուստրս ջանասիրաբար փորձում է մաքրել հատակը, այնուհետև շտապում խաղալու կամ ավարտելու մեկ այլ առաջադրանք, ես սովորաբար լվանում եմ մնացած դժվարանցանելի բծերը: Եվ ես մտածեցի Հիսուս Քրիստոսի անսահման ողորմության և գործության մասին, ում Քավությունը ծածկում է յուրաքանչյուր մարդու կյանքի դժվարանցանելի իրավիճակները: Նրա շնորհը փոխհատուցում է ծնող լինելու

իմ թերությունների համար, ճիշտ ինչպես Նրա շնորհը փոխհատուցում է այն ցավը, որ ապրում են իմ երեխաները՝ իմ թերությունների պատճառով: Մի եղանակով, որը մեզանից ոչ ոք չի կարող հասկանալ, Նրա Քավությունը կարող է բուժել այդ *ստեղծ*:

Ինձ մեծապես մխիթարեց այդ օրվա իմ ստացած անձնական հայտնությունը: Ես զգացի, որ Հոգին սովորեցնում էր ինձ, որ իմ լավագույն ջանքերը և Տիրոջ համագործակցությունը բավարար են: Ես գիտեմ, որ Երկնային Հայրը կշարունակի գործել իմ զավակների կյանքում, կամաց-կամաց կատարելապես իրականացնելու այն, ինչը ես այդքան անկատար եմ անում: Նրա օգնությամբ իմ երեխաները մի օր կկարողանան ինքնուրույն փայլել, այնպես պայծառ, կարծես Երկնային Հայրն է նրանց դաստիարակել առաջին իսկ օրվանից: Բացի այդ, Նրա ծրագիրը նաև կարողանում է ընթացքում փոխել ինձ՝ սրբացնել և ձուլել այնպես, որ ավելի շատ նմանվեմ Նրան: Օ՛հ, որքան մեծ է իմաստությունը մեր Աստծո: ■

*Հեղինակն ապրում է Յուտայում (ԱՄՆ):*



### ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

«Երկնային Հոր և մեր Փրկիչի օգնությամբ մենք կարող ենք դառնալ ավելի համբերատար, խորամիտ, օգտակար, ներողամիտ և հասկացող, եթե աղոթենք օգնության համար: Նրանց օգնությամբ մեր տներն այստեղ կարող ենք դարձնել մի կտոր երկինք՝ երկրի վրա»:

**Նախագահ Մ. Ռասսել Բալլարդ**, «Ընտանեկան խորհուրդներ», *Լիառևա*, մայիս 2016, 65:





# Դառանանք լավագույն տնտեսները երկրի, որն Աստված ստեղծեց մեզ համար



Երեց Մարկոս  
Բ. Նաշ  
Յոթանասունից

Որքան լավ հոգ տանենք այս աշխարհի և դրա մեջ եղած ամեն ինչի մասին, այնքան ավելի լավ այն կաջակցի, կոգեշնչի, կամրապնդի, կաշխուժացնի և կուրախացնի մեր սրտերն ու հոգիները:

*Հատված 2013 թվականի ապրիլի 12-ին Սուլթ Լեյք Սիթիում տեղի ունեցած Յուտայի համալսարանի Ստեզներ կենտրոնի 18-րդ ամենամյա սիմպոզիումի ելույթից:*

Ի մ սիրած զբաղմունքը բնության գրկում լինելն է՝ լինի դա արշավ, դահուկավազք, կայայկ, հեծանվավազք կամ նույնիսկ զբոսաշրջային ուղևորություն: Մանկության տարիներին ես սիրում էի լինել անտառում և զգալ մշտադալար ծառերի լուռ ու վեմամաշուք վկայությունն Արարչի մասին: Մեծանալով՝ ես ուսումնասիրության և հավատքի միջոցով իմացա, որ եթե մենք հասկանանք, թե ով ենք մենք, կյանքի նպատակը և երկրի ստեղծման պատճառը, և այս բաները պահենք մեր մտքում, մենք կվերաբերվենք այս երկրին և դրանում եղած ամեն ինչին ավելի լավ և ազնիվ ձևով:

## Երկիրը ստեղծելու Աստծո նպատակը

Հին ու նոր ժամանակների մարգարեների միջոցով Տերը փորձել է օգնել մեզ հասկանալ և գնահատել այս գեղեցիկ երկրում ապրելու պարզը: Հին Կտակարանում Դավիթը նայում էր Աստծո վեհ ստեղծագործություններին և բարձրաձայն զարմանում, թե ինչու այդպիսի հրաշքների մեջ Աստված խնամք է տանում մարդու համար (տես Սաղմոս 8.4): Դավիթը եզրակացրեց, որ մարդկությունը առանձնահատուկ է, ասելով՝ «մին քիչ ցածացրիր նորան հրեշտակներիցը» (Սաղմոս 8.5):

Մովսեսը նույնպես տեսիլքում տեսավ անթիվ աշխարհներ<sup>1</sup> և հայտարարեց. «Այժմ, այս պատճառով, ես գիտեմ, որ մարդը ոչինչ է, մի բան, որը երբեք չի

ենթադրել» (Մովսես 1.10):

Աստծո արարչագործության շքեղության առջև խոնարհվելով, Մովսեսը չկարողացավ հասկանալ մեծ ճշմարտությունը: Ուստի, Տերը կրկին ցույց տվեց նրան Իր անսահման ստեղծագործությունը և հստակ հայտարարեց, որ Նա՝ Աստված, ստեղծեց այդ ամենը «իրականացնելու մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39): Այս երկիրը, ներառելով ամեն ստեղծված բան, նախատեսված է օգնելու մեզ ձեռք բերել անմահություն և հավերժական կյանք:

Կրկին խոսելով երկրի նպատակի մասին, Տերն ասել է. «Մենք կստեղծենք մի երկիր, որի վրա սրանք [Նկատի ունի մեզ] կկարողանան բնակվել. և դրանով մենք նրանց կստուգենք, որպեսզի տեսնենք, թե արդյոք նրանք կանեն այն ամենը, ինչ Տերը՝ իրենց Աստվածը, կպատվիրի նրանց» (Աբրահամ 3.24-25, տես նաև հատված 26): Կյանքն այս երկրի վրա, զուգորդվելով ազատ կամքի պարզի հետ, մեզ հնարավորություն է տալիս փնտրել և մի օր ստանալ այն ամենը, ինչ Աստված առաջարկում է:<sup>2</sup>

Երբ ավարտվեց երկրի արարումը, Աստված գոհացավ, քանի որ տեսավ, որ այն կծառայի մեր՝ Իր զավակների համար նախատեսված Իր նպատակին:<sup>3</sup> Աստծո որդիներն ու դուստրերը և նրանց ստեղծած ընտանիքները պարզապես անկոչ հյուրեր չեն այս երկրի վրա, այլ նրանք կարևոր նշանակություն ունեն դրա նպատակի համար:<sup>4</sup>

## Մենք պետք է լինենք լավ տնտեսներ

Կյանքն այս երկրի վրա և՛ օրհնություն է, և՛ պարտականություն: Տերը հայտարարել է. «Քանզի, ահա,

դաշտի գազաններն ու երկնքի թռչունները, և այն, ինչ դուրս է գալիս երկրից, կարգված է մարդու օգտագործման համար՝ կերակրի և հագուստի համար, և որ նա կարողանա ունենալ առատորեն» (Վարդապետություն և Ուխտեր 49.19): Ինչևէ, քանի որ երկիրը և ամեն բան դրա վրա «[Նրա] ձեռքի ստեղծագործությունն է» (Վարդապետություն և Ուխտեր 29.25), այդ ամենը պատկանում է Նրան:<sup>5</sup> Որպես այս երկրի ժամանակավոր բնակիչներ, մենք տնտեսներ ենք, ոչ տերեր: Որպես այդպիսին, մենք հաշվետու ենք Աստծուն՝ տիրոջը, թե ինչպես ենք վարվում Նրա ստեղծագործության հետ. «Քանզի նպատակահարմար է, որ ես՝ Տերս, ամեն մարդու՝ իբրև տնտեսի, պատասխանատու դարձնեմ երկրային օրհնությունների վրա, որոնք ես արարել եմ և պատրաստել իմ արարածների համար» (Վարդապետություն և Ուխտեր 104.13):

Այն, թե ինչպես ենք մենք հոգ տանում երկրի համար, ինչպես ենք օգտագործում և կիսվում դրա առատությամբ և ինչպես ենք վերաբերվում այն ամենին, ինչ տրվել է մեզ, մահկանացու մեր փորձության մի մասն է:

Այն, թե ինչպես ենք մենք հոգ տանում երկրի համար, ինչպես ենք օգտագործում և կիսվում դրա առատությամբ և ինչպես ենք վերաբերվում այն ամենին, ինչ տրվել է մեզ, մահկանացու մեր փորձության մի մասն է: Մենք պետք է երախտագիտությամբ օգտագործենք այն, ինչ Տերը տվել է, խուսափելով կյանքը և միջոցները վատնելուց, և օգտագործենք երկրի լիությունը՝ հոգավոր աղքատների համար:<sup>6</sup> Տերը խորապես հոգ է տանում ողջ կենդանի բնության և հատկապես Իր զավակների համար և մեզ պատասխանատվության կենթարկի այն բանի համար, ինչ մենք նախընտրում ենք անել (կամ չանել) Իր առատ ստեղծագործության հետ:

Տերը խոստանում է մեզ, որ եթե մենք հետևենք Նրան և խելամտորեն օգտագործենք երկրի ռեսուրսները՝ գոհունակությամբ և ակնածանքով, «երկրի լիությունը [մերը] կլինի՝ դաշտի գազաններն ու երկնքի թռչունները: . . . Եվ հաճելի է Աստծուն, որ նա տվել է մարդուն այս բոլոր բաները. քանզի այդ նպատակով են դրանք ստեղծվել, որ



օգտագործվեն դատողությամբ, ոչ շռայլորեն, ոչ էլ բռնի կորզելով» (Վարդապետություն և Ուխտեր 59.16, 20):

Մենք պետք է օգտագործենք այդ ռեսուրսները դատողությամբ և երախտագիտությամբ, ուրիշներին օգնելու մտադրությամբ. ներկայիս, անցյալի և ապագայի սերունդները ստանում են օրհնություններ, որոնք մեր երկնային Հայրը ցանկանում է տալ Իր զավակներին:

## Տեսնել մեր կարիքներից ու ցանկություններից այն կողմ

Ցավոք, այսօր մենք ապրում ենք մի աշխարհում, որտեղ մարդիկ կարող են մերժել Աստծուն և արհամարհանքով վերաբերվել Նրա ստեղծածին: Երբ դա տեղի է ունենում, Աստված և արարածները ցավ են ապրում:

Ենովքն արձանագրել է, որ Աստված լաց եղավ Իր զավակների վատ ընտրությունների և անհագ եսասիրության պատճառով:<sup>7</sup> Մորոնիս մարգարեացել է, որ վերջին օրերին կլսենք «հրդեհների և փոթորիկների և ծխի մեզերի . . . [մասին և] մեծ աղտոտվածություն կլինի երկրի երեսին», և այդ իրավիճակներին կգումարվեն «ամեն ձևի պղծություններ. երբ կլինեն շատերը, ովքեր կասեն. Արա այս, կամ արա այն, և նշանակություն



չունի» (Մորմոն 8.29, 31): Երբ մարդն աղտոտում է այս աշխարհը հոգևորապես կամ ֆիզիկապես, ոչ միայն Աստված, այլ բնությունը նույնպես տառապում է:<sup>8</sup>

Կարևորն այն է, որ Տիրոջ վերականգնված Եկեղեցու և ավետարանի միջոցով մատչելի դարձած օրհնություններն ու զորությունը ունակ են սեփական ուժերից առավել սթափեցնելու և փոխելու մարդկային հոգին, սեր ներշնչելու Աստծո և Նրա ստեղծագործությունների հանդեպ և օգնելու մեզ մտածել ուրիշների բարեկեցության մասին և հաշվի առնելու ապագա սերունդների կարիքները:

## Բնությունը մեզ մոտեցնում է Աստծուն

Երկիրն ու բոլոր կյանքերն ավելին են, քան սպառվող և/կամ պահպանման ենթակա իրերը. դրանց որոշ մասերը պետք է նույնպես պահպանվեն: Անձեռակերտ բնությունը և «բոլոր բաները, որ բխում են երկրից . . . ստեղծված են մարդու օգտի . . . համար . . . թե՛ աչքը շոյելու և թե՛ սիրտն ուրախացնելու համար . . . և հոգու կենսարարության համար» (Վարդապետություն և Ուխտեր 59.18-19):

Բնությունն իր անաղարտ վիճակում մեզ մոտեցնում է Աստծուն, մաքրում միտքն ու սիրտը աղմուկից և նյութական շեղումներից, տանում է մեզ դեպի ավելի բարձր, ավելի վեհ ոլորտ և օգնում է մեզ ավելի լավ ճանաչել մեր Աստծուն. «Երկիրը պատվում է իր թներով, և արևը տալիս է իր լույսն օրվա մեջ, և լուսինը տալիս է իր լույսը գիշերով, և աստղերը նույնպես տալիս են իրենց լույսը: . . . Որևէ մեկը, ով տեսել է դրանցից անգամ ամենափոքրը, տեսել է Աստծուն իր վեհափառությամբ ու զորությամբ շարժվելիս» (Վարդապետություն և Ուխտեր 88.45, 47):

Ես դեռ սիրում եմ բարձր լեռներում քայլել հոյակապ գրանիտե ժայռերի և գագաթների վրայով: Չնայած նրանք լուռ են, նրանք խոսում են Աստծո զորության և մեծության մասին. և գեղեցիկն արարելու Նրա անզուգական հանճարի մասին: Ինչպես ուսուցանել է Ալման. «Բոլոր բաները մատնանշում են, որ կա՛ Աստված. այո, նույնիսկ երկիրը և բոլոր բաները, որ նրա երեսին են, . . . վկայում են, որ կա մի Գերագույն Ստեղծող» (Ալմա 30.44):

Ես սիրում եմ երեկոյան դիտել աստղազարդ երկինքը՝ փորձելով հայացքս կենտրոնացնել ժամանակի և տարածության հավերժության վրա: Ես միշտ հիանում եմ այն գիտելիքներով, որոնք ստանում եմ այդ լուռ պահերին, որ չնայած տարածության անսահմանությանը, տիեզերքիՏե-րը ճանաչում է ինձ՝ տիեզերքի աննշան մի մասնիկին: Եվ Նա ճանաչում է մեզանից յուրաքանչյուրին: Արարումը վկայում է Արարչի մասին, և եթե մենք պահենք այս յուրահատուկ, անձեռագործ վայրերը, նրանք պերճորեն և խորապես կվկայեն մեր Աստծո մասին և կոգեշնչեն մեզ ապագայի համար:

Որքան լավ հոգ տանենք այս աշխարհի և դրա մեջ գտնվող բոլոր բաների համար, այնքան ավելի լավ այն կաջակցի, կոգեշնչի, կամրապնդի, կաշխուժացնի և կուրախացնի մեր սրտերն ու հոգիները և կպատրաստի մեզ փառավորված վիճակում ապրել մեր ընտանիքներով մեր Երկնային Նոր հետ սելեստիալ արքայությունում, որը կլինի հենց այն երկիրը, որի վրա մենք կանգնած ենք այսօր:<sup>9</sup>

Թող որ մենք երախտագիտությամբ հոգ տանենք այս երկրի՝ մեր ներկա և հնարավոր ապագա տան համար: ■

### ՀՐՈՒՆԵՐ

1. Տես Եբրայեցիս 1.2:
2. Տես 2 Նեփի 2.16:
3. Տես Մովսես 2.31:
4. Տես «Ընտանիք. հայտարարություն աշխարհին», *Լիսինսու*, մայիս 2017, 145:
5. Տես նաև Վարդապետություն և Ուխտեր 38.16-17:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 104.17-18:
7. Տես Մովսես 7.28:
8. Տես Մովսես 7.48-49:
9. Տես Վարդապետություն և Ուխտեր 88.18-20:

ՉԱՓԱՀԱՍ ԵՐԻՏԱՍՍԱՐԴՆԵՐ

Հոգ տանել Աստծո  
ստեղծագործությունների  
համար

30



ԿԱՆԱՅՔ ԵՎ  
ՔԱՀԱՆԱՑՈՒԹՅԱՆ  
ՋՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ԻՆՇ ԴԵԿԱՎԱՐՆԵՐ  
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՎ  
ՎԿԱՑՈՒՄ ԵՆ

12

ԵՎ, շԵՏԵՎԻՐ ԻՆՁ

ՄՏՔԵՐ  
ՎԱՐԴԱԳԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՎ ՈՒՆՏԵՐ 39 ԳԼՈՒԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

20

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԴՐԱ ՏԵՂԸ ՄԵՐ  
ԵՐԿՐԳԱԳՈՒԹՅԱՆ  
ՄԵՁ

24